
ԱՂՁՆԻՔԱՀԱՅԵՐԻ ԽՆԱՄԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԾԵՍԵՐԻ ՈՒ
ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Աղձնիքում գյուղական համայնքի գործող իրավաստվորությանին կարգի պայմաններում ամուսնությունը պաշտոնապես ճանաչվում և իրավական կիրարկման ձև էր ստանում հարսանեկան ծեսերի ու սովորույթների բազմատարր համակարգի իրագործումից հետո միայն: Հարսանեկան ծիսաշարը ներառում է երեք հիմնական փուլ՝ խնամախոսություն (աղջիկտես, ուզնկան, խոսկապ), նշանադրություն (նշանդրեք, խալանկտուր, կթխան, խլղաթ կամ հարսնտեսներ) և բուն հարսանիք (հարսնած, պսակ): Այս երևույթները համընդհանուր էին պատմական Հայաստանի գրեթե բոլոր ազգագրական մարզերում: Աղձնիքում խնամախոսության գործընթացը, իր հերթին, կարելի է բաժանել մի քանի ենթափուլի, որոնք, փաստորեն, արտացոլում են ամուսնության նպատակով կողմերի ձեռնարկած առաջին գործնական քայլերը: Այս հարցում առավել ակտիվ էր տղայի ընտանիքը: Ինչ եղանակով էլ ընտրվեր աղջիկը՝ տղայի ծնողների կամ միջնորդների ցուցումով, թե ամուսնացող երիտասարդի կամքով, աղջիկտեսի, ուզնկանի և խոսկապի աստիճանները խնամախոսության փուլում անխուսափելի էին: Սկսվում էր աղջիկտեսից, որը տղայի մոր ու մերձավոր ազգական կանանց գործն էր և նպատակ ուներ, մի կողմից, տեսնել և հավանել ապագա հարսնացուին, մյուս կողմից՝ շոշափել աղջկա մոր ու մերձավոր կանանց կարծիքը և վերաբերմունքը:

Ուզնկանությունը սկսվում էր աղջիկտեսով և ավարտվում խոսկապով: Մասունի Մառնիկ, Ախալի և այլ գյուղերում գյուղից դուրս աղջիկտեսի ներկայանում էին միայն տղամարդիկ (հայրը, հորեղբայրը, քեռին)՝ պատրվակ բերելով, թե, իբր, փնտրում են իրենց կորած ոչխարները և կողմնակի գրույցներից հետո միայն, հայտնում իրենց ներկայանալու բուն նպատակը: Իսկ Գալհոկ գյուղի սովորույթի համաձայն, տղայի հայրը թաքուն մի փարչ էր բերում և տեղավորում աղջկա հորական տան ախոռում: Եթե հյուրընկալները նկատած փարչը կտարեին, տղայի հայրը կխուսափեր բացահայտել իր մտադրությունը, իսկ եթե անվնաս թողնեին, կսկսեր բանակցությունները: Բաղեշում տղայի կամ աղջկա ծնողները հարսնացու կամ փեսացու էին գտնում և միմյանց ընտանիքների մասին տեղեկություններ ստանում միջնորդների կամ հարևան-բարեկամ կանանց միջոցով: Միջնորդի մատնանշած աղջկա հոր տուն էին ներկայանում տղայի մայրը, մորաքույրը, մեծ հարսը կամ այլ հարազատ կանայք: Աղջիկտեսի առաջին նշանը դրան հանդարտ, բայց հաճախական թակոցն էր, որով ներսում գտնվողները իրազեկ էին դառնում եկվորների նպատակին: Աղջիկտեսի հյուրերին բարեհաճորեն ընդունում և

նստեցնում էին փռոցներին ու սպասում մոր կանչով աղջկա հայտնվելուն: Աղջիկը խոնարհաբար, մի ծունկը գետնին հպած, մյուսը՝ կիսածալ, բարևում էր նախ եկվորների գլխավորին, ապա հերթով համբուրում բոլորի ձեռքը: Աղջիկտեսի եկած կանանցից ավագն այդ ընթացքում ուշադիր և բժախնդրությամբ գննում էր աղջկա դեմքը, քայքայը, նույնիսկ բացում բերանը, գննում ատամները, խոսեցնում, ստուգում ձայնը: Հավանելու դեպքում ասում էին. «Աստված կալամով քաշել է և ուր տեղը դրել, կալաթ կսուր չկա», այսինքն՝ պակաս, արատավոր կողմ չունի: Եվ որպես հավանություն տալու և յուրային դարձնելու նշան՝ տղայի մայրն աղջկա գոգն էր գցում կամ ափի մեջ դնում մի կարմիր խնձոր: Բսկ չհավանելու դեպքում, ասում էին. «Լավ աղջիկ է, Աստված տիրոջը բաշխե» կամ՝ «Տիրոջը բուրբարաք եղնի»: Մակայն աղջիկտեսի գործողությունները սոսկ այսքանով չէին ավարտվում: Նախնական հավանության արժանացած աղջկա «կրկնակի ստուգման» հաջորդ քայլը տղայի մերձավոր կանանց՝ մեծ քրոջ, մեծ հարսի, հորեղբոր կնոջ կամ մորաքրոջ կողմից նրան «խումրա» (ընտիր) բաղնիք կանչելն էր՝ մարմնի բարեմասնություններն ուշադիր գննելու նպատակով: Աղջիկը բաղնիք էր ներկայանում իր ազգականուհիների ուղեկցությամբ: Հավանելու դեպքում դաստակներին հազցնում էին բաղնիքում վաճառվող «շուշա բիլագուկներ» (ապակե գունավոր ապարանջաններ)՝ յուրաքանչյուր թեին 5-10 հատ¹: Աղջիկտեսի այս արարողությունը նույնպես պատմական խոր հնություն ունի և վկայում է հայ կանանց վաղեմի լայն իրավունքների ու ազատության մասին:

Բաղեշում, թեև ավելի սակավ, բայց կենցաղավարում էր նաև փեսատեսի սովորույթը: Արդեն ընտրված աղջկա հարազատները երբեմն պահանջում էին տեսնել ապագա փեսացուին: Նախապես զգուշացված լինելով՝ տղան պայմանավորված ժամին եկեղեցի էր գնում իր ընկերների կամ հարազատ տղամարդկանցից որևէ մեկի հետ, ուր գալիս էին նաև աղջկա կողմի մի քանի երաշխավորված տղամարդիկ՝ նրան տեսնելու, իրենց տպավորությունն ու կարծիքը կազմելու, հավանություն տալու կամ չտալու: Աղձնիքի հովտային շրջաններում փեսատեսը կայանում էր աղջկա հոր տանը, ուր նա դարձյալ գալիս էր ազգական երիտասարդի կամ քեռու ուղեկցությամբ: Հավանելու դեպքում փեսացուին և նրանց ուղեկիցներին արգելվում էր գիշերել աղջկա հոր տանը: Միայն հարսանիքից հետո էին ամուսնացող զույգերը միմյանց տեսնելու և ճանաչելու հնարավորություն ստանում: Մտացվում էր այնպես, որ ամուսնացող զույգերը միմյանց «տեսնել» կարող էին մերձավորների աչքերով, և եթե «հավնին, սակարկություն կը սկսին, իսկ եթե ոչ՝ ուրիշ աղջիկ մը տեսնելու կերթան»²: Աղջիկտեսի սովորույթը պահպանվում էր ոչ միայն Բաղեշում, այլև Դիարբեքի քաղաքի հայ բնակչության շրջանում³, մինչդեռ Սասունում և լեռնային մյուս շրջաններում բացառված էր նահապետական հարաբերությունների պատճառով:

¹ Տե՛ս Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. Դաշտային ազգագրական կյութեր (այսուհետ՝ ԴԱՆ), տ. 1, էջ 35-36, 57-59, տ. 2, էջ 190-193:

² Տե՛ս «Բիւրակն», 1899, № 9-10, էջ 143:

³ Տ ի գ ը ա ն Մ Վ ու ն դ. Ամիտայի արձագանքները. հ. Ա., Ուիհոքն Նիւ Ճերզի, 1950, էջ 401:

Դժվար չէ նկատել, որ փեսացուն ոչ միայն զրկված էր հարսնացու ընտրելու, նրան տեսնելու հնարավորությունից, այլև շատ հաճախ ինքն էլ, ինչպես հարսնացուն, դառնում էր զննման օբյեկտ: Քաղաքներում «աղջիկտեսին» հաջորդում էր «փեսատեսի» սովորույթը: Փեսացուն չէր մասնակցում ամուսնության գործարքի ծիսաավանդական հաջորդ փուլերին ևս՝ խոսկապին, խնամախոսությանը, երբեմն նաև նշանադրությանը, մինչդեռ հարսնացուն ականա դրանց լռելյայն մասնակիցն էր⁴:

Աղջիկտեսին հաջորդում էր խնամախոսությունը, որն սկսվում էր «ուզնկանությանը» և ավարտվում «խոսկապով» կամ «խոսք առնելով»:

Նախնական զննումներից և փոխադարձաբար հավանություն տալուց հետո տղայի ծնողներն աղջկա տուն էին ուղարկում իրենց պատգամախոսին՝ համայնքում հարգանք վայելող մի տղամարդու՝ աղջկա ծնողների մտադրությունը շոշափելու և աղջկա ձեռքը խնդրելու առաջարկությամբ: Խնամախոսության փուլում գնացողը ուզնկան էր կոչվում, իսկ ծիսակատարությունը՝ ուզնկանություն, որը կատարվում էր խիստ զգուշավոր ու գաղտնի, որպեսզի անհաջողության դեպքում կողմերի արժանապատվությունը վիրավորած չլիներ: Ուզնկանությունը ամուսնության և հարսանեկան ծիսաշարի պաշտոնական առաջին արարողությունն էր: Ուզնկան բառացի նշանակում է աղջիկ ուզել⁵: Մա խնամախոսության իրավական գործողություն էր և նշանադրության պարտավորության անհրաժեշտ ու կարևոր սկիզբ: Ուզնկանի ծեսին աղջիկը ներկա չէր լինում: Մայրն աշխատում էր ըստ ամենայնի ծանրումեծ ներկայացնել դստերը՝ նրա «անունն ու պատիվը» բարձր պահելու նպատակով: Միաժամանակ աղջկա ծնողներն ու հարազատներն էլ, իրենց հերթին, ձգտում էին տեղեկություններ ստանալ ապագա փեսայի ու նրա ընտանիքի մասին: Այս արարողությունը, ըստ սովորույթի, երբեմն կրկնվում էր 3-7 անգամ, եթե կտրուկ մերժում չէր լինում: Ամեն անգամ պատճառաբանում էին՝ աղջիկը փոքր է (եթե անգամ մեծ էլ լիներ), տարին երաշտ է, տնտեսականը չի ներում կամ ազգից մարդ է մահացել, օտարության մեջ պանդուխտ ունենք, գալուստին ենք սպասում և այլն: Վերջնական համաձայնության գալուց հետո պայմանավորվում էին «խոսք առնումի» կամ «խոսկապի» մասին: Իսկ եթե աղջկա հարազատները պատասխանը շատ էին ձգձգում, խոսքառնումին գնում էին պատկառելի կազմով՝ քավորը, տղայի հայրը, մեծ հորեղբայրը և քեռին⁶, նաև երկու ընտանիքների կողմից հարգված գյուղի մեծերից մեկը կամ մի քանիսը:

⁴ Ձ. Խ ա տ ա յ ա ն. Փեսան հայերի ամուսնահարսանեկան սովորույթներում (XIX դ. վերջ-XX դ. սկիզբ).- Ձեկուցումների թեզիսներ, Երևան, 1984, էջ 17:

⁵ Ուզնկան նշանակում է՝ 1) աղջիկ ուզող տղան, 2) աղջիկ ուզելու գնացող, 3) խնամախոս անհատը կամ խումբ: Ուզնկան գնալ՝ խնամախոսության գնալ, ուզնկանություն ուզնկան լինել կամ խնամախոսություն (տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան. հ. 4, Երևան, 1980, էջ 572):

⁶ Տե՛ս ԴԱՆ, տ. 13, էջ 63-69: Այդ նույնը տարածված էր կովկասյան ժողովուրդների, օրինակ՝ ադրբեջանցիների (տե՛ս «Народы Кавказа», т. 2, М., 1962, с. 134), ավարների մեջ (տե՛ս 3. А. Н и к о л ь с к а я. Свадебные и родильные обряды аварцев.- Советская этнография, 1946, 12, с. 193): Խնամախոսության էին գնում գյուղի հարգված, ոչ ազգակից ծերունիներից մի քանիսը:

Նախապես լուր ուղարկելով՝ տղայի հարազատները քահանայի ուղեկցությամբ կիրակի օրվա երեկոյան աղջկա ծնողների տուն էին գնում խնամախոսության խոսքառնումի, խոսկապի: Ամիդ (Դիարբեքիր) քաղաքում խոսքառնումին կանայք չէին մասնակցում⁷, իսկ Բաղեշում ներկա էր լինում նաև տղայի մայրը⁸:

Խոսկապ կոչվում էր այն պայմանավորվածությունը, որ տեղի էր ունենում իրար հետ խնամի դառնալու ցանկություն ունեցողների միջև: Աղջկա տանը խնամախոսները, որպես կանոն, գրուցում էին տարբեր հարցերի շուրջ՝ գյուղի առօրյայից, տնտեսությունից, երկու ազգատոհմերի փոխհարաբերություններից: Ամենատարբեր կողմնակի խոսակցություններից հետո աստիճանաբար այցելության նպատակն էին հայտնում՝ հաճախ օգտագործելով ժողովրդի մեջ պահպանված այլաբանական արտահայտություններ, որից հետո քահանան կամ քավորը հայտնում էին գալու նպատակը. «Եկել ենք ձեր շեն օջախից մի բուռ կրակ տանենք», «Եկել ենք ձեր օջախից մի բուռ մոխիր տանենք մեր օջախին», «Եկել ենք մի լաչակ խնդրելու» կամ, վերջապես՝ «Աստծո կամքով եկել ենք ձեր աղջիկը մեր տղային ուզելու»⁹: Աղջիկ ուզելու եկած հյուրերը իրենց այցելության նպատակը հայտնելուց հետո խնդրում են ցույց տալ հարսնացուին: Անկախ այն բանից, թե ինչպիսի ընթացք կրնադուներ կողմերի խնամախոսությունը, աղջկան ցույց տալը սովորութեան պարտականություն էր: Խնամախոսության եկածներն իրենք էլ պիտի տեսնեին ու հավանեին իրենց ապագա հարսնացուին: Աղջկա հոր կանչով ներկա հարազատները, թեև նախապես արդեն միասնական համաձայնության էին եկած լինում, այնուամենայնիվ, հնարավորինս խուսափողական պատասխաններ էին տալիս՝ բերելով բազմազան առարկություններ: Խնամախոսության ժամանակ արված առաջարկությունը չէր ավարտվում շուտափույթ ընդունումով, քանի որ դա անպատվաբեր էր աղջկա և նրա հարազատների համար: Ազգագրական նյութերը վկայում են, որ նշանադրության ընդունումը կատարվում էր մեկ-երկու շաբաթվա ընթացքում: Այնուհետև աղջկա հայրն ասում էր, թե դասերը հանձնել է մորը, և նա պետք է վճռի: Մայրն էլ նույն կերպ աղջկան «հանձնում էր» հարազատներից որևէ մեկին, մինչև որ վճռելու իրավունքը տրվում էր քեռուն: Վերջինս նույնպես տեղի-անտեղի առարկություններից հետո վերջապես ասում էր՝ եթե հայրը համաձայն է՝ ես տալիս եմ այսինչին՝ փեսայի անունը տալով¹⁰: Այդ պահին փեսայի հայրը

⁷ Տ ի գ Ր ա ն Մ կ ու ն դ. նշվ. աշխ., էջ 11:

⁸ Տե՛ս ԴԱՆ, տ. 1, էջ 57:

⁹ Հայաստանի տարբեր շրջաններում յուրովի էին հնչում աղջկա ձեռքը խնդրելուն ուղղված խոսքերը: Այսպես՝ «Եկել եմ քո օջախից մի բուռ հող տանելու», մերժելու դեպքում՝ «Ձեր կորուստը մեր տանը չի» (տե՛ս Ե. Լ. ա լ ա յ ա ն. Բորչալու գավառ. – Ազգագրական հանդես» (այսուհետև՝ ԱՀ), Թիֆլիս, 1902, գ. 9, էջ 216): Կամ՝ «Եկել եմ Ձեր ճրագից մին կրակ տանես», մերժումը՝ «Մեր օջախի ճրագի պատրուքը հլա չենք պատրաստել», կամ՝ «Էս տարի կարալ չենք տալ, հացերնիս պակաս է» (տե՛ս Ե. Լ. ա լ ա յ ա ն. Վայոց Ձոր. – ԱՀ, գ. 13, Թիֆլիս, 1906, էջ 144): Տավուշում՝ ասում էին՝ «Քեզ ունես մի լավ բերքատու ծառ, այդ ծառից մի չոփ եմ ուզում իմ ծառին պատվաստելու համար» (մեր գրառումներից – Ռ. Ն.):

¹⁰ Տե՛ս ԴԱՆ, տ. 13, էջ 64-69: Համանման սովորույթը մեկ այլ տարբերակով հայտնի էր Մուշում: Այստեղ ևս հայտնի էր վճիռը ներկայացնելու նմանօրինակ սովորույթը, միայն թե վերջին մարդն

համբուրում էր նոր խնամու ձեռքը, իսկ դռանը և կտուրին սպասող «լրտեսները» շտապում էին փեսայի տուն. «Եղավ, եղավ, զիմ անկրճկըլեն»¹¹: Միայն այս պահին թաքստոցից ներս է հրավիրվում նոր հարսը՝ քողավորված, որ իր սկեսրայրի և նրա ազգականների աջը համբուրի՝ վերջիններից ստանալով դրամական կամ զարդեղեն նվերը՝ պըրկիշը: Դրանից հետո քահանան օրհնում էր բերված նշանը, զգեստեղենը: Արարողությունն ավարտվում էր սեղան զցելով և շնորհավորանքներով:

Մասունցիներով բնակեցված գյուղերում ևս 1970-ական թվականներին աղջկա ծնողներն առաջին անգամ դրական պատասխան չէին տալիս, խնամախոսները մի քանի անգամ այցելելուց հետո միայն դրական պատասխան էին ստանում: Պատասխանողը աղջկա հայրն էր, որը կնոջ միջոցով հարցնում էր նաև աղջկա կարծիքը, թեև դա ձևական բնույթ էր կրում: Մերժման դեպքում ևս խնամախոսները հյուրասիրվում էին, սակայն չէին օգտագործվում խնամախոսության եկածների բերած խմիչքը, իսկ հաճախ հյուրերը չէին ընդունում տանտիրոջ հյուրասիրությունը: Դրական պատասխանի դեպքում հյուրերը սեղանին էին դնում իրենց հետ բերած խմիչքը: Աղջիկը գալիս էր, խոնարհաբար բարևում հյուրերին, որի ընթացքում նրան յուրաքանչյուրը տալիս էր իր բերած նվերը: Երբ գյուղում լուր էր տարածվում «խոսք առնելու» հաջող ավարտի վերաբերյալ, նշանվողների մասին ասում էին. «Ականջը կտրել են»¹²: Այդ ժամանակ աղջկա հայրն ասում էր. «Բարով եք եկել, Աստված թող մեզ չամաչեցնի», և բանակցություններն ավարտվում էին: Դա նշանակում էր վերջնական համաձայնություն՝ խոսկապ կողմերի միջև: Այնուհետև սկսվում էին խոսքառնումի թեթև հացկերույթը, շնորհավորանքներն ու մաղթանքները¹³: Այն վավերացվում էր «մի փոքրիկ դրամական նվերով»՝ մեկ չարիկ (5 դուրուշ) կամ մեկ մեջիդիե (20 դուրուշ), կամ մեկ ոսկի դնելով սեղանի վրա, կամ էլ հարսնացուի պարանոցն էին անցկացնում ոսկեշար շղթա: Դրամական այդ նվերը կամ զարդն էլ կոչվում էր խոսկապ: Խոսկապը նույնպես պետք է իրականացվեր հնարավորին չափ գաղտնի: Կողմերն իրար փոխադարձաբար խնդրում էին. «Քարըմ դրեք վրը խոսքկապին», այսինքն՝ խոսկապը ծածուկ պահեք: Վերջում խնամիները համաձայնության էին գալիս նշանադրության օրվա մասին և խաղաղությամբ բաժանվում: Խոսկապով ավարտվում էր խնամախոսության փուլը, որին պիտի հաջորդեր նշանադրությունը:

Խնամախոսության վերը շարադրված տարբերակն արդյունք է գրավոր որոշ տվյալների և մեր կողմից գրանցված դաշտային ազգագրական համապատասխան նյութերի համադրման: Սակայն եթե անդրադառնալու լինենք առավել նեղ, տեղային տարբերակներին, ապա դրանցում ևս կբացահայտվեն որոշ ինքնուրույն գծեր:

աղջկան «հանձնում էր» փեսացուին՝ տալով նրա անունը (տե՛ս Հանդես հարսանեաց Մուշ գավառին մէջ. – «Բազմավէպ», 1867, էջ 307):

¹¹ Ըստ սովորույթի՝ լավ լուր տալու ժամանակ բռնում էին լուրին անհամբեր սպասողի՝ մոր կամ փեսայի ականջը՝ վարձք պահանջելով: Անկրճկըլեն-ն կազմված է ականջ և կալնում բառերից, որ նշանակում է կատարվածի, ավետիսը բերելու վարձքը տալ:

¹² Տե՛ս ԴԱՆ, տ. 6, էջ 55-56:

¹³ Տե՛ս ԴԱՆ, տ. 13, էջ 68-69:

Այսպես, աղջիկտեսի նկարագրված սովորույթը, որը XX դարասկզբին տարածում ունենր ոչ միայն Բաղեշում, այլև Դիարբեքիրում¹⁴ և մերձակա հովտային շրջաններում, Մասունում և Աղձնիքի այլ լեռնային վայրերում լիովին բացառվում էր՝ նահապետական կենցաղի առավել ավանդապահ բնույթի պատճառով: Այստեղ, համենայն դեպս, ըստ Վ. Պետոյանի, խնամախոսությունն սկսվում և ավարտվում էր խոսկապով, որին էլ անմիջապես հաջորդում էր նշանդրերը¹⁵:

Խնամախոսության աղձնիքյան ծեսերը որոշակի նմանություններ ու տարբերություններ ունեն ինչպես Հայաստանի պատմամշակութային այլ շրջաններում, այնպես էլ հարևան ուրիշ ժողովուրդների մեջ տարածված նմանատիպ սովորույթների հետ¹⁶: Մեզ հայտնի նյութերի մեջ միայն Գամիրքում է, որ առկա են խնամախոսության Աղձնիքին հատուկ բոլոր երեք փուլերն էլ¹⁷: Կեսարիայում դրանք համապատասխանաբար կոչվում էին աղջիկտես, ռիճաչիներ (խնդրարկուներ) ու դարկել և խոսկապ¹⁸: Սակայն, ի տարբերություն Աղձնիքի, աղջիկտեսին այստեղ մասնակցում էր նաև ապագա փեսան, ուստի և ավելորդ էր դառնում փեսատեսը¹⁹:

Աղձնիքին հարակից պատմաազգագրական շրջաններին վերաբերող համանման նյութերում աղջիկտեսի մեզ հայտնի տարբերակը գրեթե բացակայում է²⁰: Որոշ վայրերում²¹ համատեղվում են աղջիկտեսը, ուզնկանն ու խոսկապը՝ դրսևորվելով որպես խնամախոսության մեկ ընդհանուր ակտ, միայն թե ուզնկան կոչվում էր աղջկա հոր տուն գնացող մարդկանց խումբը, իսկ խոսկապ՝ աղջկա օգտին տրվող դրամական և այլ կարգի նվերները²²: Այլ վայրերում խնամախոսությունն ի-

¹⁴ Տ ի գ ռ ա ն Մ կ ու ն դ. նշվ. աշխ., էջ 401:

¹⁵ Վ. Պ է տ ո յ ա ն. Մասնա ազգագրությունը. Երևան, 1965, էջ 237–238:

¹⁶ Տեղին է նշել, որ մշակութային համանման երևույթների գրառումը հայերի մեջ տարբեր ժամանակներում և տարբեր բանահավաքների կողմից միշտ չէ, որ իրականացվել է մանրակրկիտ ձևով, ըստ համապատասխան նյութի պարբերաշրջանային հաջորդականության՝ առանց կարևոր շատ մանրամասեր աչքաթող անելու: Ուրիշ ժողովուրդներից թուրքերի մեջ է, որ այդ փուլերը առավել ցայտուն էին դրսևորվում (տե՛ս М. Н. С е р е б р я к о в а. Семья и семейная обрядность в турецкой деревне. Новейшее время. М., 1979, с. 89–90): Որոշ իմաստով դրանց հաջորդական կարգի նմանություն է բացահայտվում նաև բելուզների (տե՛ս Э. Г. Г а ф ф е р б о р г. Бенуджи Туркменской ССР. Очерки хозяйства, материальной культуры и быта. Л., 1969, с. 170–172) և Հյուսիսային Չովկասի որոշ ժողովուրդների մեջ (տե՛ս Я. С. С м и р н о в а. Семья и семейный быт. – В кн.: Культура и быт народов Северного Кавказа. 1917–67 гг., М., 1968, с. 192; ն ու յ ն ի՝ Детский и свадебный циклы обычаев и обрядов у народов Северного Кавказа. – «Армянская этнография и фольклор», т. VI, М., 1976, с. 73):

¹⁷ Վ. Ս. Թ է մ ու ը ճ յ ա ն. Գամիրքի հայերը (պատմաազգագրական ուսումնասիրություն). – «Հայ ազգագրություն և բանահյուսություն». հ. 1, Երևան, 1970, էջ 115–116:

¹⁸ Մ. Պ ա լ յ ա ն. Ամուսնական սովորությունները Կեսարիոյ մեջ. – «Բիրական», 1900, էջ 344–347:

¹⁹ Տե՛ս նույն տեղում:

²⁰ Բացառություն է Ե. Լալայանի մի նկարագրությունը (տե՛ս Ե. Լ ա լ ա յ ա ն. Մուշ–Տարուն. – ԱՀ, գ. 26, Թիֆլիս, 1916, էջ 157):

²¹ Ե. Տ է ը - Մ կ ը տ չ յ ա ն. Վանեցոց հարսանիքը (կենցաղագրական պատկերներ). – ՀԱԲ, հ. 1, էջ 157–158:

²² Տե՛ս Հանդէս հարսանեաց Մուշ գավառին մեջ, էջ 307–308:

րագործվում էր «խոսք առնելու» երկու տարբերակով²³: Առաջինը՝ «կողմնակի խոսք առնելը» համեմատելի է Աղձնիքի ուզնկանի, իսկ երկրորդը՝ «հարե կրորն» (քրդ. ա-յո անել, ասել), որի ժամանակ նաև նշան էր արվում²⁴ խոսկապի հետ:

Արևելյան Հայաստանի պատմաագագրական մի շարք շրջաններում աղջիկ-տեսն իրականացվում էր հիմնականում հասարակական տոնախմբությունների ու ծեսերի ժամանակ, թեև որպես աղջկան հավանություն տալու միջոց դարձյալ կիրառվում էր նրան խնձոր տալու սովորույթը²⁵: Ուզնկանին փոխարինում էր աղջիկ ուզելը²⁶, իսկ խոսկապին՝ բելգահը,²⁷ բարգեհը²⁸ կամ բարգահը²⁹: Հետաքրքիր է, որ խոսկապին այդպես էին կոչում նաև վրացիներն³⁰ ու ադրբեջանցիները³¹, մի հանգամանք, որ վկայում է Հայաստանի այս հատվածի լեզվամշակութային սերտ կապերը նշված ժողովուրդների հետ:

Աղձնիքում³² ամուսնացող զույգերի տեսակցությունը խստիվ արգելվում էր³³, նրանք միմյանց տեսնելու և ճանաչելու հնարավորություն էին ստանում միայն հարսանյաց հանդեսից հետո: Այնպես որ, ապագա ամուսինները միմյանց «տեսնել» կարող էին սուկ մերձավորների աչքերով և եթե «...հավնին, սակարկություն կը սկսին, իսկ եթե ոչ՝ ուրիշ աղջիկ մը տեսնելու կերթան»³⁴: Այսպիսի դեպքերում, փեսացուն երբեմն դժգոհ էր մնում ընտրությունից և, որպես ծնողների կամքով կատարվող բռնի ամուսնության դեմ խուլ բողոք, հեռանում էր տնից: Օրինակ՝ Մասունի Բերս գյուղում Գևորյի Գրիգորին, երբ ամուսնացնում են առանց ընտրության հնարավորություն տալու, նա իր հարսնացուին տեսնում է միայն հարսանիքին, չհավանելով և դժգոհ մնալով ընտրությունից, հեռանում է տնից՝ հաստատվելով

²³ Տե՛ս Բ Ե և Է. Բուլանըխ կամ Հարք գավառ. – ԱՀ, գ. V, Թիֆլիս, 1899, էջ 90-93: Համանման սովորույթը խիստ բնորոշ էր նաև թուրքալեզու որոշ ժողովուրդների: Այսպես, ադրբեջանցիներին հայտնի էին խնամախոսության ոչ պաշտոնական և պաշտոնական փուլերը (տե՛ս Народы Кавказа, т. II, М., 1962, с. 135), իսկ դազախների մեջ որոշակիորեն գատվում էին «նախնական բանակցությունների» և պաշտոնական խնամախոսության փուլերը (տե՛ս Н. П. Л о б а ч е в а. К истории сложения института свадебной обрядности (на примере комплексов свадебных обычаев и обрядов народов Средней Азии и Казахстана). М., 1978, с. 147-148):

²⁴ Խնամախոսության հաջող ավարտը նշանավորող տարատեսակ նվերների մատուցման սովորույթը հայտնի էր գրեթե բոլոր ժողովուրդներին:

²⁵ Տե՛ս Է. Լ. Կ Ե Կ Կ Կ Կ. Գանձակի գավառ. – Երկեր, հ. 2, Երևան, 1988, էջ 342, ն Կ Ե Կ Կ Կ Կ. Գողթան գավառ. – ԱՀ, գ. XII, 1904, Թիֆլիս, էջ 120, Ն Կ Ե Կ Կ Կ Կ. Վայոց Ձոր. – ԱՀ, գ. XIII, Թիֆլիս, 1906, էջ 144:

²⁶ Տե՛ս Է. Լ. Կ Ե Կ Կ Կ Կ. Բորչալու. – ԱՀ, գ. IX, Թիֆլիս, 1902, էջ 216, Ն Կ Ե Կ Կ Կ Կ. Վարանդա. – ԱՀ, գ. Բ, Թիֆլիս, 1897, էջ 119:

²⁷ Տե՛ս Է. Լ. Կ Ե Կ Կ Կ Կ. Բորչալու, էջ 217:

²⁸ Տե՛ս Է. Լ. Կ Ե Կ Կ Կ Կ. Վայոց-Ձոր, էջ 144:

²⁹ Տե՛ս Է. Լ. Կ Ե Կ Կ Կ Կ, Գողթն, էջ 120:

³⁰ Տե՛ս Народы Кавказа, т. II, с. 308, Н. Г. В о л к о в а, Г. Н. Д ж е в а х и ш в и л и. Бытовая культура Грузии XIX-XX веков. Традиции и инновации. М., 1982, с. 116:

³¹ Տե՛ս Народы Кавказа, т. II, с. 135:

³² Տե՛ս ԴԱՆ, տ. I, էջ 57-58, Վ. Պ Ե Կ Կ Կ Կ Կ Կ. նշվ. աշխ., էջ 238:

³³ Երիտասարդների հանդիպումները դատապարտելի, ուստի և անհնարին էին նաև Հյուսիսային Չովկասում տե՛ս Я. С. С м и р н о в. Детский и свадебный..., с. 73):

³⁴ «Բիրակն», 1899, № 9-10, էջ 149:

Միրիայի Հալեպ քաղաքում: Մակայն նման դեպքերը եզակի էին³⁵: Երբ Հայաստանի այլ շրջաններում (ինչպես և վրացիների³⁶ ու արխագների³⁷ մեջ) այդ խնդիրն այնքան էլ խստորեն չէր հետապնդվում, հաճախ խնամախոսությանն ու մանավանդ նշանդրեքին մասնակցում էին նաև երիտասարդները³⁸:

Ինչպիսի տարբերակիչ գծեր էլ որ ունենային նկարագրված տեղական փոփոխակները, դրանք, այնուամենայնիվ, ամբողջության մեջ կազմում էին մի կուռ ընդհանրություն՝ բնութագրելով հայերի ամուսնահարսանեկան բոլորաշրջանի առաջին փուլը՝ խնամախոսությունը: Այդ փուլի համեմատական վերլուծությունը պարզորոշ ի հայտ է բերում ավանդական-ընտանեկան կենցաղի մի քանի բնորոշ կողմեր: Այսպես, դժվար չէ նկատել, որ խնամախոսության անմիջական ու հիմնական նպատակը կայանալիք ցանկալի ամուսնության վերաբերյալ աղջկա ծնողների և հարազատների համաձայնությունն էր: Մակայն այն հանգամանքը, որ խնամախոսության բարեհաջող ընթացքի և մանավանդ ավարտի դեպքում տղայի կողմը դրամական ու այլ կարգի նվերներ էր անում աղջկան և նրա ծնողներին, վկայում է այն, որ ամուսնահարսանեկան ծիսաշարի այս նախնական փուլը պարունակում էր նաև պարտավորեցնելու, աղջկան յուրային դարձնելու էական պահը³⁹: Պարտավորեցնողի դերում հանդես էր գալիս տղայի հայրը, որը, ի դեպ, խնամախոսության մեջ ներգրավված էր միայն վերջին՝ ամենակարևոր աստիճանում, խոսկալի ժամանակ: Երկրորդ կարևոր և ուշադրության արժանի հանգամանքն այն է, որ այստեղ ևս բացահայտվում է հայ նահապետական գերդաստանի հայրիրավական բնույթը: Դա հատկապես դիտվում է հարսնացու ընտրելու և նախնական համաձայնության գալու հարցում տղամարդկանց վճռորոշ դերի, ինչպես նաև աղջկան հարսնության տալու գործում նրա հոր ունեցած վերջնական խոսքի իրավունքի մեջ: Մակայն պակաս էական չեն նաև մայրիրավական որոշ սկզբունքներ: Այսպես, թեև ընտրողը հիմնականում տղայի կողմն էր, այնուամենայնիվ, աղջկա կողմն էլ իր հերթին իրավունք ուներ ստուգելու տղայի ու նրա ընտանիքի ով, ինչ և ինչպիսին լինելը: Մայրիրավական սկզբունքների առկայության լավագույն վկայություններից մեկն էլ ամուսնության հարցում մոր և քեռու ունեցած նշանակալի դերն էր, որ բացահայտվում է թեկուզ վերոհիշյալ խոսկալի արարողության մեջ, երբ վերջնական պատասխան տալուց առաջ հայրն աղջկան մորն էր «տալիս», իսկ հարազատներից վերջինը, որին «հանձնում են» հարսնացուին, քեռին էր: Հատկանշական է նաև, որ «նախքան պաշտոնապես աղջկան ուզելը, աշխատում էին սիրա-

³⁵ Տե՛ս ՂԱՆ, տ. 13, էջ 3:

³⁶ Н. Г. Волкова, Г. Н. Джавахишвили. Նշվ. աշխ., էջ 116:

³⁷ Արխագների մեջ աղջիկտեսն ընդհանրապես համարվում էր երիտասարդների մենաշնորհը (տե՛ս Յ. Դ. Инал - Ипа. Очерки по истории брака и семьи у абхазов. Сухуми, 1954, с. 55-56):

³⁸ Տե՛ս, օրինակ, Դ. Ս. Վարդունյան, Է. Տ. Կարապետյան. Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը. Երևան, 1963, էջ 122, Գ. Ա. Հակոբյան. Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը. Երևան, 1974, էջ 184-185, Ե. Լ. ալայան. Վայոց-Ձոր, էջ 147:

³⁹ Որոշ ժողովուրդների մեջ այդ պահը երբեմն ընդունում էր սպառնալից ձևեր: Հմնտ օր. արխագների «փամփուշտ նետելու» սովորույթի հետ (տե՛ս Յ. Դ. Инал - Ипа. Նշվ. աշխ., с. 56-60):

շահել աղջկա մորեղբորը և նրա մյուս ազգականներին և սրանց բարեխոսությունը խնդրել»⁴⁰, մի սովորույթ, որ գոյություն ուներ նաև վրացիների մեջ⁴¹: Նշված և հարսանյաց ծիսաշարի համանման այլ պարագաներում քեռու՝ ուղղակիորեն կամ ծիսականացված ձևով դրսևորվող ծանրակշիռ դերի առկայությունը, անշուշտ, պետք է համարել ավունկուլատային բնույթի վերապրուկ⁴²:

Աղջիկտեսի ժամանակ փեսացուի մայրը և բարեկամուհիները ապագա հարսնացուին համակողմանիորեն զննում ու ստուգում էին: Աղջիկտեսից հետո է, որ տղայի ծնողները իրենց ընտրության մասին հայտնում էին ազգի մեծերին, որոնց կարծիքը դեպքերի հետագա զարգացման համար վճռական էր: Իսկ ազգի մեծերը համաձայնում էին այդ ընտրությանը՝ հաշվի առնելով վերոնշյալ նկատառումները: Դրանից հետո միայն տղամարդկանց հետ և բարեկամների ավելի լայն շրջանակով փեսացուի մայրն էլ էր զննում «հարսնտեսի»: Այս դեպքում արդեն ընտանիքները ծանոթանում էին միմյանց հետ: Եթե տարբեր գյուղերից էին, անուղղակիորեն արդեն խոսվում էր խնամիության մասին:

Ուշագրավ է աղջկա ողջ ազգուտակը ներկայացնող ավագին ուղղված՝ տղայի կողմը ներկայացնողի հետևյալ խոսքը. «Եկել ենք ձեր օջախից մի բուռ մոխիր տանենք», «Եկել ենք ձեր օջախից մի քիչ կրակ տանենք մեր օջախի համար» կամ այլ տեղերում ասում էին՝ «Փայտը մեզանից, կրակը՝ ձեզանից» և այլն: Ինչպես տեսնում ենք, նոր ընտանիք կազմավորելու համար աղջիկ ուղեղիս առաջին պլան էր մղվում այն դերը, որ պետք է կատարեր կինը նոր ընտանիքում: Այդօրինակ արտահայտությունները գալիս են դարերի խորքից, այն ժամանակներից, երբ կրակը նախամարդկանց կյանքի երաշխիքն էր, կրակի պահպանումով էր պայմանավորված օջախ-ընտանիքի հիմնադրումը: Եվ կրակի պահպանողն էլ հենց կինն էր, որին աստիճանաբար ամրակայվում էր այդ գործառույթը, որ խնամախոսության ժամանակ մղվում էր առաջին պլան: Այստեղ կինը ներկայանում է որպես սերունդների շարունակող ու պահպանող, ընտանիքի հիմք:

Նախահարսանեկան այս շարքը նշված փուլային արարողություններով պարունակում է նախորդ դարաշրջանների հասարակական կենցաղի նկարագիրը, քանի որ ամուսնությունը, լինելով տղամարդու և կնոջ միության կարգավորման կարևոր հաստատություն, մշտապես փոփոխվում ու լրացվում էր նորանոր կանոններով ու արգելքներով: Նախահարսանեկան շարքի արարողությունների էությունն այն է, որ աստիճանաբար, մի քանի փուլեր անցնելուց հետո աղջիկը դառնում է հարսնացու, ապա՝ հարս⁴³: Ընդհանրապես կովկասյան, մասնավորապես հայկական հարսանիքի համար բնորոշ է ամուսնացողների միջև գոյություն ունեցող սահմանափակումների ու արգելքների խստիվ կիրառումը, հատկապես նախահարսանեկան

⁴⁰ Ե. Լ. ա լ ա յ ա ն. Մուշ-Տարոն, էջ 157:

⁴¹ Եթե քեռին հիվանդության և այլնայլ պատճառներով չէր կարող առաջնորդել իր քրոջ աղջկա խնամախոսներին, ապա, որպես համաձայնության նշան, նրանց հետ ուղարկում էր իր հրացանը կամ որևէ այլ անձնական իր, որ կոչվում էր հաստատում (տե՛ս “Народы Кавказа”, т. II, с. 308):

⁴² М. О. К о с в е н. Авнкулат.— Советская этнография, 1948, № 1.

⁴³ Տե՛ս Ե. Գ. Կ ա ր օ Վ. Состав происхождения свадебной обрядности.— Сборник материалов архива этнографии, т. 8. М., 1929, с. 84.

փուլում, մինչև առագաստի ծեսի իրականացումը, ի տարբերություն եվրոպական տիպի հարսանիքի, երբ հարսնացուն ու փեսացուն միմյանց հետ հարաբերությունների բավականին մեծ ազատություն ունենին⁴⁴:

Մինչհարսանեկան շարքի առաջին փուլին՝ աղջիկտեսին, տրվում էր կարևոր նշանակություն, քանի որ ավանդական հարսանիքը կատարվում էր երկու կողմերի ծնողների համաձայնությամբ: Այս փուլի էությունն այն է, որ տղայի կողմը առաջին բացահայտ քայլն էր անում ապագա հարսնացուին «իրենցը» դարձնելու, հասարակայնորեն տաբուացնելու ուղղությամբ: Տվյալ դեպքում տղայի ծնողները, լինելով նախաձեռնող, առավելապես կարևորում էին աղջկա ծնողների սոցիալական դիրքը, հեղինակությունը, երկու գերդաստանների փոխհարաբերությունները: Առաջին պլան էր մղվում նաև հարսնացուի հատկանիշները՝ նրա աշխատասիրությունը, մարմնական արատներ չունենալը և այլն: Հայերի ավանդական կյանքում հաճախ ամուսնությունը օգտագործվում էր երկու տոհմերի միջև եղած դարավոր հակամարտությանը վերջ տալու համար⁴⁵:

Մատենագրական և դաշտային ազգագրական նյութերը վկայում են, որ քրիստոնեական եկեղեցին ևս նկատելի դեր է ունեցել ամուսնաբնտանեկան արարողություններում: Միջնադարյան քրիստոնեական եկեղեցու մի շարք կանոններով ու օրենքներով արգելվում էր ամուսնությունը մինչև յոթերորդ սերունդը ազգականների շրջանում: Ազգային եկեղեցին հետամուտ էր, որ ամուսնացողների ընտանիքներում չլինեն ժառանգական հիվանդությամբ տառապողներ, հաշմանդամության դեպքեր⁴⁶:

Այսպիսով, խոսքառնումից մինչև նշանդրեք տևում էր 7–10 օր: Նշանդրեքը պաշտոնապես վավերացնում էր աղջկա և տղայի կապը ու կատարվում էր աղջկա հոր նախաձեռնությամբ, որի ժամանակ էլ տրվում էր նշանի մատանին:

О НЕКОТОРЫХ ОБЫЧАЯХ И ОБРЯДАХ СВАТОВСТВА У АГДЗНИКСКИХ АРМЯН

РАФИК НАГАПЕТАН

Р е з ю м е

Самобытный обряд сватовства у агдзникских армян в то же время имеет общее с подобными ритуалами как в других исторических районах Армении, так и у соседних народов. Сравнительный анализ этого предсвадебного этапа ярко выявляет некоторые типичные стороны быта традиционной семьи. В ряде армянских ритуалов предсвадебных отношений жених–невеста находят отражение картины общественной жизни предшествующих эпох.

⁴⁴ Տե՛ս Կ. Վ. Կ ի Ս թ Վ. Типологические проблемы изучения восточнославянского свадебного обряда. – В кн.: Проблемы типологии и этнографии, М., 1979, с. 224.

⁴⁵ Տե՛ս Վ. Բ դ ո յ ա ն. Հարսանեկան ծեսերի ու սովորույթների նկարագիր, գրանցված XIV դարում. – «Բանբեր Մատենադարանի», 1956, թիվ 7, էջ 48:

⁴⁶ Մաննազիքը Հայոց. հ. Ա, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 18: